ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

Բյուջեում նախատեսվող փոփոխությունների

Հաշվի առնելով համայնքի բյուջեի տարեսկզբի ազատ մնացորդը/վարչական՝ 969 173 484.5 ՀՀ դրամ և ֆոնդային՝ 759 474 759.2 ՀՀ դրամ/, ավագանու որոշման նախագծով և համայնքի ղեկավարի առաջարկով նախատեսվում է 2024 թվականի ծրագրերը շարունակելու, ավարտելու, ինչպես նաև 2025 թվականին նախատեսվող սուբվենցիոն և համայնքում պլանավորված ծրագրերը կատարելու համար:

Վարչական մասի տարեսկզբի ազատ մնացորդից նախատեսվում է 969 173 484.5 ՀՀ դրամ ուղղել ֆոնդային մաս և կատարել բյուջեի ճշտում, ըստ որի

4.5.1 ծրագրի 5113 հոդվածն ավելացնել **1 179 290 200.7** ՀՀ դրամով, որից **181 507 798** դրամ 2024 թվականի սուբվենցիոն ծրագրի շրջանակներում նախատեսված և պայմանագրերով հաստատված Սիսիան քաղաքի Նար-Դոս փողոցի, Նար-Դոս-Գ.Նժդեհ ճանապարհահատվածի, Խանջյան 1ա , 3ա, Հ. Ազոյան 2, 2ա, 4, 6, 8, 10 , Որոտան 2ա, Շիրվանզադե 2ա, Որոտան 1,3,5,7, Որոտան 2,4,6,8 բազմաբնակարան բնակելի շենքերի բակային հատվածների և ճանապարհների կապիտալ վերանորոգում աշխատանքների համար, **88 233 503** ՀՀ դրամ Սիսիան համայնքի Խանջյան 1, 3, 5, 7 , Որոտան 4 ա ,4 բ և Իսրայել-Օրի 5, 7, 9 բազմաբնակարան բնակելի շենքերի փողոցների կապիտալ վերանորագման համար, **255 351 497** ՀՀ դրամ Սիսիան համայնքի Գայի 1, 2, 4, 6, 7, 10, 12, 13, 14, 15, Զորավար Անդրանիկ 1, 3, 5, Շահումյան 72, 74, շենքերի բակային փողոցների, Զորավար Անդրանիկ, Հ. Որոտնեցի փողոցների վերջնամասի կապիտալ վերանորագման համար, **286 726 410** ՀՀ դրամ Սիսիան համայնքի Այգեստան, Գետափնյա, Անդրանիկ Մանուկյան,Արցախի, Լալայան, Մ. Գորկի փողոցների կապիտալ վերանորագման համար, **163 075 220** ՀՀ դրամ Սիսիան համայնքի Դուրյան 2, Սիսական 9,11,13,15,19, Ադոնցի 3, Իսրայելյան 39, Ա. Մանուկյան 3,2,2ա, Նժդեհի 4 , Սիսական 46 ա, 50, 50 ա, Ադամյան 11 շենքերի բակային հատվածների, Շահումյան փողոցի սկզբնամասի կապիտալ վերանորագման համար, **64 427 834** ՀՀ դրամ Սիսիան համայնքի Ույծ բնակավայր տանող ճանապարհի կապիտալ վերանորագման համար, **3 300 000** ՀՀ դրամ Սիսիան համայնքի Տեր Ղազարյան, Գրիգոր Լուսավորիչ, Նիկողայոս Ադոնցի նրբանցք, Նիկողայոս Ադոնցի 1-ին նրբանցք, Կոմիտաս, Շահումյանը Սիսականին կապող հատված, Սիսիան Իշխանասար խճուղու ձախ հատվածից դեպի քաղաքային փողոցների սկզբնամաս տանող ճանապարհի կապիտալ վերանորագման աշխատանքների համար նախագծանախահաշվային և փորձաքննության ծառայությունների ձեռքբերման համար, **4 400 000** ՀՀ դրամ Սիսիան համայնքի Նելսոն Ստեփանյան, Աբովյան, Տերյան, Աղայան, Բակունց, Տիգրան Մեծ և Գայի փողոցների կապիտալ վերանորագման աշխատանքների համար նախագծանախահաշվային և փորձաքննության ծառայությունների ձեռքբերման համար, **10 550 000** ՀՀ դրամ Սիսիան համայնքի Շաքի ՀԷԿ-ի կից տարածքից դեպի Շաքիի ջրվեժ տանող հետիոտնային արահետի կապիտալ կառուցման աշխատանքների նախագծանախահաշվային և փորձաքննության ծառայությունների ձեռքբերման, ինչպես նաև հետագա աշխատանքների կատարման համար, **3 300 000** ՀՀ դրամ Սիսիան համայնքի Բռնակոթ բնակավայրի Վ. Թանգյան, Ա. Շահնազարյան, Ա. Գրիգորյան և 12-րդ փողոցների, Շաքի բնակավայրի դպրոցի մոտակայքից դեպի Շաքիի ջրվեժի վերին հատված տանող ճանապարհի, Շաղատ բնակավայրի 8-րդ, 11-րդ և 1-ին փողոցների, Սպանդարյան բնակավայրի 3-րդ և 4-րդ փողոցների, Սառնակունք բնակավայրի 1-ին, 2-րդ և 5-րդ փողոցների կապիտալ վերանորոգման աշխատանքների նախագծանախահաշվային և փորձաքննության ծառայությունների ձեռքբերման համար, **2 200 000** ՀՀ դրամ Սիսիան համայնքի Մ-2 մայրուղու և Սիսիան համայնքի Իշխանասար բնակավայրի խաչմերուկից դեպի Իշխանասար բնակավայրի կենտրոն տանող ճանապարհի կապիտալ վերանորոգման աշխատանքների նախագծանախահաշվային և փորձաքննության ծառայությունների ձեռքբերման համար, ինչպես նաև **116 217 938.7** ՀՀ դրամ նախատեսված է համայնքի և բնակավայրերի այլ ճանապարհների և մայթերի նախագծանախահաշվային և փորձաքննության ծառայությունների և 2025 թվականի վերոնշյալ նախագծերի որոշակի մասի կատարման համար:

4.5.1 ծրագրի 5121 հոդվածն ավելացնել **72 000 000** ՀՀ դրամով թվով 4 հատ միկրոավտոբուսների ձեռքբերման համար:

4.5.1 ծրագրի 5122 հոդվածն ավելացնել **900 000** ՀՀ դրամով Սիսիան համայնքի ճանապարհներին տեսախցիկներին տեղադրելու համար:

5.1.1 ծրագրի 5129 հոդվածն ավելացնել **29 312 200** ՀՀ դրամով՝ որից **5 000 000** ՀՀ դրամ աղբամաններ ձեռքբերելու համար, **23 322 200** ՀՀ դրամ սանմաքրման աշխատանքների իրականացման համար մասնագիտական տեխնիկա ձեռքբերելու համար, **990 000** ՀՀ դրամ կոյուղագծի մաքրման աշխատանքների իրականացման համար մասնագիտական տեխնիկա ձեռքբերելու համար :

5.1.1 ծրագրի 5121 հոդվածն ավելացնել **18 000 000** ՀՀ դրամով թվով 1 հատ ինքնաթափ բեռնատար ձեռքբերման համար:

6.4.1 ծրագրի 5129 հոդվածն ավելացնել **17 045 820** ՀՀ դրամով՝ ավտոաշտարակի ձեռքբերման համար:

6.4.1 ծրագրի 5113 հոդվածն ավելացնել **2 233 998** ՀՀ դրամով՝ Սիսիան համայնքի Սիսիան քաղաքի լուսավորության ցանցի կառուցման աշխատանքների նախագծանախահաշվային և փորձաքննության ծառայությունների ձեռքբերման համար,

9.5.1 ծրագրի 5113 հոդվածն ավելացնել **195 742 426** ՀՀ դրամով, որից **131 107 621** դրամ Սիսիան համայնքի Աղվան Մինասյանի անվան արվեստի և ստեղծագործության կենտրոն ՀՈԱԿ-ի շենքի նախագծանախահաշվային և փորձաքննության լրամշակման ծառայությունների ձեռքբերման, ինչպես նաև հետագա աշխատանքների կատարման համար, **64 634 805** դրամ Սիսիան համայնքի նախկին պարարվեստի դպրոցի շենքի փորձաքննության լրամշակման ծառայությունների ձեռքբերման, ինչպես նաև հետագա աշխատանքների կատարման համար,

9.5.1 ծրագրի 5511 հոդվածն ավելացնել **5 915 818** ՀՀ դրամով՝ ֆուտբոլի խաղադաշտերի կառուցման համար:

8.2.7 ծրագրի 5113 հոդվածն ավելացնել **9 998 281** ՀՀ դրամով՝ 2025 թվական տեղափոխված Սիսիան համայնքի թվով 5 /Վուրգ Ոսկանյանի, Աշոտ Նավասարդյանի, Ս.Շահումյանի, Երկրաշարժի զոհերի և Հայրենական մեծ պատերազմի զոհերի հիշատակին նվիրված/ հուշարձանների կառուցման աշխատանքների, տեխնիկական և հեղինակային հսկողության վճարման համար:

6.3.1 ծրագրի 5113 հոդվածն ավելացնել **39 030 000** ՀՀ դրամով՝ որից **15 650 000** Սիսիան համայնքի Անգեղակոթ, Արևիս-2/երկու/ ՕԿՋ, Բալաք, Բնունիս, Գետաթաղ, Նորավան, Շաղատ, Շաքի, Որոտնավան, Սալվարդ, Գորայք բնակավայրերում առկա ՕԿՋ-ների սանիտարական գոտիների ցանկապատերի կառուցման աշխատանքների նախագծանախահաշվային և փորձաքննության ծառայությունների ձեռքբերման համար, ինչպես նաև հետագա աշխատանքների կատարման համար, **23 380 000** Սիսիան համայնքի Տոլորս բնակավայրի 1-ին և 2-րդ փողոցների և Որոտնավան բնակավայրի 1-ին փողոցի կոյուղագծերի կառուցման աշխատանքների կատարման համար:

1.1.1 ծրագրի 5113 հոդվածն ավելացնել **152 497 500** ՀՀ դրամով՝ Սիսիան քաղաքի Սիսական 41 վարչական շենքի վերանորոգման աշխատանքների նախագծանախահաշվային և փորձաքննության ծառայությունների ձեռքբերման, ինչպես նաև հետագա աշխատանքների կատարման համար,

1.1.1 ծրագրի 5122 հոդվածն ավելացնել **6 682 000** ՀՀ դրամով՝ Սիսիանի համայնքապետարանի աշխատակազմի և բնակավայրերի վարչական շենքերի կարիքների համար համակարգչային տեխնիկաներ ձեռքբերելու համար:

Ավագանու որոշման նախագծով առաջարկվում է վարչական բյուջեի պահուստային ֆոնդի 11.1.2 ծրագիր 4891 հոդվածից '

240 000 ՀՀ դրամ տեղափոխել 1.1.1 ծրագրի 4241 հոդվածին <<ԻՐՏԵԿ>> տեղեկատվական կենտրոնի համակարգից օգտվելու համար, հիմք ընդունելով 2025 թվականի հունվարի 27-ի Սիսիանի համայնքապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետ/իրավաբան/ Սուսաննա Սահակյանի զեկուցագիրը և համայնքի ղեկավարի առաջարկը,

91 000 ՀՀ դրամ տեղափոխել 8.2.7 ծրագրի 4251 հոդվածին Սիսիան համայնքի Գորայք բնակավայրում գտնվող գերեզմանատան ցանկապատ ձեռքբերելու համար, հիմք ընդունելով 2025 թվականի հունվարի 30-ի Սիսիանի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության բաժնի կողմից կազմված թերությունների ակտը և համայնքի ղեկավարի առաջարկը:

Ավագանու որոշման նախագծով առաջարկվում հետևյալ գումարների պլանավորումը համայնքի բյուջեի եկամտային և ծախսային մասերում.

Սիսիան համայնքի կարիքների համար թվով 50 հատ աղբամաններ ձեռքբերելու համար նախատեսվում է 05.1.1 ծրագիր 5129 հոդվածում ավելացնել **1 800 000** (մեկ միլիոն ութ հարյուր հազար) ՀՀ դրամ, որն տրամադրվել է <<ԶԱՆԳԵԶՈՒՐԻ ՊՂՆՁԱՄՈԼԻԲԴԵՆԱՅԻՆ ԿՈՄԲԻՆԱՏ>> բարեգործական հիմնադրամի կողմից և պլանավորվում է նաև ֆոնդային բյուջեի /ԳՈՒՅՔԻ ԻՐԱՑՄԱՆ ԵՎ ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԿԱՊԻՏԱԼ ԾԱԽՍԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵ ՍՏԱՑՎՈՂ ՄՈՒՏՔԵՐ՝ ՏՐԱՄԱԴՐՎԱԾ ՆԵՐՔԻՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻՑ/ եկամտային մասում:

Սիսիան և նախկին Գորայք համայնքների 2022-2023 թվականների կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսը և 2025 թվական տեղափոխված թերի աշխատանքների և ծառայությունների գումարները վճարելու համար **28 888 231.9** ՀՀ դրամ տրամադվել է պետության կողմից, որն պլանավորվել է ֆոնդային բյուջեի համապատասխան ծրագրերով և հոդվածներով, ինչպես նաև /ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻՑ ԿԱՊԻՏԱԼ ԾԱԽՍԵՐԻ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՀԱՏԿԱՑՈՒՄՆԵՐ (ՍՈՒԲՎԵՆՑԻԱՆԵՐ)/ եկամտային մասում:

Ֆինանսատնտեսական բաժնի պետ **Դ. Այվազյան**

05.02.2025թ.

ՏԵՂԵԿԱՆՔ

Սույն նախագծի ընդունումից հետո համայնքի եկամտային մասում բյուջեի մուտքերը կազմում են **1 759 336 475.6** ՀՀ դրամ իսկ ծախսային մասը կավելանա **1 759 336 475.6** ՀՀ դրամով:

Ֆինանսատնտեսական բաժնի պետ **Դ. Այվազյան**

05.02.2025թ.